ՆԱԽԱԳԻԾ 61

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ
ՈՐՈՇՈՒՄ

'-----' ---------- 2011 թվականի N ----Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄՇԱԿՈՒՅԹԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆԸ ԳՈՒՄԱՐ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

<<Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 19-րդ հոդվածի 3-րդ կետին համապատասխան՝ Հայաստանի Հանրապետության Կառավարությունը *որոշում է.*

1. Հայաստանի Հանրապետության անկախության 20-ամյակին նվիրված գովազդային նյութերի և հուշանվերների պատրաստման նպատակով <<Մշակութային ծրագրերի իրականացման գրասենյակ>> պետական հիմնարկին որպես նվիրաբերություն տրամադրելու համար Հայաստանի Հանրապետության մշակույթի նախարարությանը 2011 թվականի առաջին կիսամյակում հատկացնել 214486.0 հազ. դրամ՝ Հայաստանի Հանրապետության 2011 թվականի պետական բյուջեով նախատեսված Հայաստանի Հանրապետության Կառավարության պահուստային ֆոնդի հաշվին (բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման <<Ընթացիկ դրամաշնորհներ պետական և համայնքային ոչ առևտրային կազմակերպություններին>> հոդվածով):

2. Հայաստանի Հանրապետության մշակույթի նախարարին՝ սույն որոշման 1-ին կետով հատկացված գումարը <<Մշակութային ծրագրերի իրականացման գրասենյակ>> պետական հիմնարկին տրամադրել նվիրաբերության պայմանագրի հիման վրա:

Ա. Պողոսյան

Ն Ա Խ Ա Հ Ա Շ Ի Վ

Հայաստանի Հանրապետության անկախության 20-ամյակին նվիրված գովազդային նյութերի և հուշանվերների պատրաստման ծախսերի

Ծախսատեսակի անվանումը	Գումարը /հազար դրամ/
1. Պաստառների տպագրություն 10 տեսակ x 149.6 հ. դ.= 1496.0 հ. դ. 18 տեսակի x 300 հատ x 3.0 հ. դ.= 16200.0 հ. դ.	17696.0
2. Հեռուստահոլովակ՝ 20 հատ x 1870.0 հ. դ. = 37400.0 հ. դ.	37400.0
3. Տոնական դրոշակազարդարում՝ 3740.0 հ. դ.	3740.0
4. Քաղաքային ավտոբուսների գովազդային պաստառապատում՝ 5610.0 հ. դ.	5610.0
5. Լուսաձայնային ձևավորում՝ 2244.0 հ. դ.	2244.0
6. Թղթե պաստառներ՝ 5 տեսակի x 10000 հատ x 75 դրամ = 3750.0 հ. դ.	3750.0
7. Բուկլետ՝ 100000 հատ x 75 դրամ = 7500.0 հ. դ.	7500.0
8. Կրծքանշան՝ 60000 հատ x 95 դրամ = 5700.0 հ. դ.	5700.0
9. Գրիչ՝ 50000 հատ x 190 դրամ = 9500.0 հ. դ.	9500.0
10. Դպրոցական տետրեր՝ 200000 հատ x 115 դրամ = 23000.0 հ. դ.	23000.0
11. Ֆլեշքարտ՝ 10000 հատ x 1120 դրամ = 11200.0 հ. դ.	11200.0
12. Թղթե տոպրակ՝ 3 տեսակի x 50000 հատ x 75 դրամ = 11250.0 հ. դ.	11250.0
13. Ծրար՝ 6 տեսակի x 10000 հատ x 150 դրամ = 9000.0 հ. դ.	9000.0
14. Բաժակներ/սուրճի/՝ 200 հատ x 3740 դրամ = 748.0 հ. դ.	748.0
15. Բաժակներ/թեյի/՝ 200 հատ x 3740 դրամ = 748.0 հ. դ.	748.0
16. Բանալիների շղթա՝ 20000 հատ x 750 դրամ = 15000.0 հ. դ.	15000.0
17. Գլխարկ, շապիկ, պայուսակ՝ 10000 հատ x 3740 դրամ = 37400.0 հ. դ.	37400.0
18. Ֆոտոալբոմ 1000 հատ x 13.0 հ. դ. = 13000.0 հ. դ.	13000.0
ԸՆԴԱՄԵՆԸ	214486.0

ՏԵՂԵԿԱՆՔ

<<ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄՇԱԿՈՒՅԹԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆԸ ԳՈՒՄԱՐ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ>> ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԱՅԼ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ԿԱՄ ԲԱՑԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

<<Հայաստանի Հանրապետության մշակույթի նախարարությանը գումար հատկացնելու մասին>> Հայաստանի Հանրապետության Կառավարության որոշման նախագծի ընդունումը այլ իրավական ակտերի ընդունման անհրաժեշտություն չի առաջացնում:

ՏԵՂԵԿԱՆՔ

<<ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄՇԱԿՈՒՅԹԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆԸ ԳՈՒՄԱՐ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ>> ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵՈՒՄ ԾԱԽՍԵՐԻ ԵՎ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ՆՎԱԶԵՑՄԱՆ ԿԱՄ ԱՎԵԼԱՑՄԱՆ ՄԱՍԻՆ

<<Հայաստանի Հանրապետության մշակույթի նախարարությանը գումար հատկացնելու մասին>> Հայաստանի Հանրապետության Կառավարության որոշման նախագծի ընդունումը Հայաստանի Հանրապետության պետական բյուջեում լրացուցիչ ծախսեր չի առաջացնում:

ՆԱԽԱՐԱՐ՝ Հ. ՊՈՂՈՍՅԱՆ